Վերապատրաստող կազմակերպություն ՀՀ ԿԳՄՍ նախարարություն
«Երևանի Լեոյի անվան հ.65 դպրոց» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Հնչյունափոխական կանոնների ուսուցումը ավանդական և ժամանակակից մեթոդների գործադրմամբ

Կատարող՝ հայոց լեզվի և գրականության
ուսուցչուհի Ազնիվ Ցոլակի Սերոբյան

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 15 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ բ.գ.դ Աստղիկ Հայրապետյան

Գյումրի – 2022թ

Բովանդակություն

Ներածություն..... ...էջ3

Մաս I ..... էջ 4 – 5

Մաս II..... էջ 6 – 14

Մաս III..... էջ 15 - 17

Եզրակացություն..... էջ 18

Օգտագործված գրականություն..... էջ 19

Ներածություն

Հնչյունափոխական կանոնների ուսուցումը ժամանակակից և ավանդական մեթոդների գործադրմամբ ընդգրկուն, կարևոր և արդիական թեմա է, քանի որ հնչյունափոխության ուսուցումը սկսվում է V դասարանից և շարունակվում մինչև 12-րդ դասարան։ Այն առնչվում է մի շարք այլ թեմաների՝ գոյականի հոգնակի թվի կազմություն, ուղղագրություն, ուղղախոսություն, բառակազմություն։ Այս առումով հիմնաքարային թեմա է և հետաքրքիր։

Լինելով հիմնական դպրոցի ուսուցիչ՝ սույն հետազոտական աշխատանքում ներկայացնելու եմ հնչյունափոխական կանոնների ուսուցումը V դասարանում։

Աշխատանքի ընթացքում կփորձեմ ներկայացնել այն «նուրբ» խնդիրները, որոնք ի հայտ են գալիս հնչյունափոխական կանոններն ուսուցանելիս։ Սա կլինի իմ աշխատանքի բուն նպատակը, որից էլ կբխեն հետևյալ խնդիրները.

ա)հնչյունափոխական կանոնների ուսուցման ժամանակ փնտրել և գտնել, առանձնացնել այն մեթոդները, հնարները, որոնք կլինեն առավել արդյունավետ,

բ)կիրառել այդ մեթոդները, հնարները՝«ճաշակով» համադրելով ավանդականն ու ժամանակակիցը։

Մաս I Հնչյունափոխություն

Այս թեման ուսումնասիրելուց առաջ երեխաներն ուսումնասիրում են «Հայերենի շեշտը» թեման, հետևաբար ինքնուրույն կարող են շեշտադրել բառերը: V դասարանում ուսումնասիրվում է շեշտափոխական հնչյունափոխությունը:

Դասը սկսում եմ այսպես. հնչյունափոխություն բառի բառակազմական պատկերն եմ ներկայացնում, որից էլ պարզ է դառնում, որ բառի մեջ հնչյունի փոփոխությունն է ուսումնասիրելու «Հնչյունափոխության» բաժինը:

Առաջարկում եմ ուշադիր ուսումնասիրել ցուցապաստառը (օգտվում եմ տեսազննական մեթոդից):

I շարք	IIշարք	IIIշարք
<u>ջուր</u>	<u>ջր</u>ման	գարե<u>ջուր</u>
<u>սեր</u>	<u>սիր</u>ահար	բնա<u>սեր</u>
<u>մութ</u>	<u>մթ</u>նալույս	ադամա<u>մութ</u>
<u>նուշ</u>	<u>նշ</u>ենի	գետնա<u>նուշ</u>

Քանի որ պաստառի վրա համապատասխան արմատները հոծ գծերով ընդգծված կլինեն, երեխաները առավել հեշտությամբ կնկատեն այն իրողությունը, որ I շարքի բառերը (արմատները) II շարքի բառերի I բաղադրիչ են, իսկ III շարքի բառերում՝ վերջին բաղադրիչ: Երեխաներին համբերատար լսելուց հետո կհրահանգեմ շեշտադրել բոլոր բառերը՝ վերհիշելով շեշտադրման կանոնները: Յուրաքանչյուր շարքից մեկ աշակերտ կշեշտադրի բառերը: Աշխատանքն ավարտելուց հետո առաջարկում եմ նորից ուշադիր նայել պաստառին և փորձել եզրահանգում անել, նկատածը ձևակերպել կանոնի ձևով: Երեխաները կնկատեն, որ նույն արմատը բառասկզբում շեշտազրկվել է և փոփոխվել, իսկ բառավերջում պահել շեշտը և չի ենթարկվել որևէ փոփոխության:

Նրանց լսելուց հետո լրացումը, հղկում եմ կանոնը, այն է՝ հնչյունափոխությունը կատարվում է շեշտի դիրքի փոփոխության արդյունքում:

Հաճախ հետևյալ տրամաբանական հարցն եմ տալիս աշակերտներին.

արդյո՞ք բոլոր հնչյունները կարող են հնչյունափոխվել: Պատասխանները կարող են տարբեր լինել, սակայն պետք է ուղղորդել՝ հիշեցնելով, որ շեշտ կրում են միայն ձայնավոր հնչյունները:

Երկհնչյունների մասին կարելի է խոսել ավելի ուշ:

Հաջորդիվ անհրաժեշտ է պարզաբանել սղման դեպքերը, խոսել սղման երևույթի մասին՝ որպես հնչյունափոխության դրսևորման առանձին տեսակի.

T- աձև աղյուսակով ներկայացնում եմ հետևյալը

մածո՛ւն	Մածնաբրդոշ
ճահի՛ճ	ճահճուտ
ամո՛ւր	ամ
Կապո՛ւյտ	կապտերանգ

Հանձնարարում եմ բարձրաձայն ընթերցել՝ ուշադրություն դարձնելով նշված մասերին: Անմիջապես նկատելի կդառնա, որ շեշտ կրող ձայնավոր հնչյունները և երկհնչյունը «կորել» են II շարքի բառերի նույն արմատներում:

Աշակերտների հետ ընդհանուր եզրահանգման կհանգենք՝ ներկայացնելով հետևյալ գծապատկերը:



Վերը նշված 2 երևույթների համար կան պայմանական նշաններ՝ → և ↑ կամ 0:

Օրինակ՝

վեճ – վիճել (ե→ի)

դպիր – դպրոց (ի↑) կամ (ի – 0)

Այսքանը բավական է մուտքի դասի համար։ Աշակերտը ընդհանուր պատկերացում կկազմի հնչյունափոխության մասին։

Մաս II Ձայնավորների հնչյունափոխությունը

Դասը պետք է սկսել ավանդական մոտեցումով։



Հարկավոր է այստեղ անպայման նշել, որ ոչ բոլոր ձայնավոր հնչյունները և ոչ բոլոր երկհնչյուններն են շեշտի նկատմամբ հավասարաչափ զգայուն։ Թեմայի վերջում անդրադառնում եմ նաև ա-ի և ո-ի հնչյունափոխված դեպքերին։

Է(ե) ձայնավորի հնչյունափոխությունը։

Գրատախտակին գրում եմ մի օրինակը, երեխաներին հանձնարարում եմ շարունակել, վերականգնել անհնչյունափոխ արմատը և տեսնել հնչյունափոխությունը.

<u>վիր</u>ավոր – <u>վեր</u>

<u>զին</u>վոր – <u>զեն</u>

<u>սիր</u>ել – <u>սեր</u>

<u>կիս</u>ել – <u>կես</u>

<u>միջ</u>անցք – <u>մեջ</u>

<u>պատվիր</u>ել – <u>պատվեր</u>

<u>հրավիր</u>ել – <u>հրավեր</u>

Այստեղ բացատրում եմ երեխաներին, որ հայերենում կան այնպիսի արմատներ, որոնք ինքնուրույն գործածություն չունեն՝ վեր, զեն։ Սա կարևոր է, որպեսզի V դասարանում սովորող աշակերտը արմատը վերականգնելիս չմոլորվի։

Բոլոր երեխաներն էլ, գրատախտակին գրվածը ուսումնասիրելով, կհանգեն հետևյալին.

բառամիջում ե→ի։ Միջամտում եմ և հավելում, որ հնչյունափոխական այս կանոնը պարտադիր չէ բոլոր բառերի համար և բերում օրինակներ.

լեռ- լեռնային

գետ – գետափ

նետ – նետաման

հեր – հերակալ

Նշված բառերը ոչ մի դեպում չեն հնչյունափոխվում։

Աշխատանքը շարունակում ենք այլ մեթոդով։

Գրատախտակին գրում եմ էշ, էգ, էջ արմատները և հանձնարարում նոր բառեր կազմել նշված արմատներով.

Էշ – իշուկ, իշաբեռ, իշամեղու,

Էջ – իջնել, իջվածք, իջևան

Էգ – իգամոլ, իգական

Կամ մեկ այլ տարբերակ.

Էշ + ա + բեռ = իշաբեռ

Էգ + ա + մոլ = իգամոլ

Էջ + վածք = իջվածք

2 տարբերակի դեպքում էլ երեխաները ճիշտ եզրահանգում կանեն և կսահմանեն հնչյունափոխական կանոնը. բառասկզբի է – ն հնչյունափոխվում է և դառնում ի։ Դարձյալ հիշեցում. ոչ բոլոր բառերում.

էկրան – էկրանաչափ

է – էակ

էժան – էժանագին

Հաջորդ դասին հայտորոշիչ թեստ եմ անցկացնում 10րոպեի ընթացքում(առավելագույնը 10 միավոր)։ Թեստ (նմուշօրինակ)

1. Ցույց տալ հնչյունափոխական փոփոխությունը։(2մ)

ա) դեմ – դիմանկար

բ) վեպ – վիպասան

2. Կազմել բարդ բառեր։(2մ)

շեկ + ա + հեր =

հրավեր + ա + տոմս =

3.Տրված արմատներով կազմել նոր բառեր այնպես, որ հնչյունափոխվեն։(2մ)

ա)վեճ -

բ)էշ -

4. Գտնել հնչյունափոխված մասը, վերականգնել անհնչյունափոխ արմատը։(2մ)

ա)իջևան -

բ)տիրուհի -

5.Ընդգծել 2 հնչյունափոխված բառ։(2մ)

Ես սիրում եմ ընթերցել իշամեղվի մասին։

Երեխաներին նախապես ներկայացնում եմ թեստի գնահատման սանդղակը, որը միավորային չէ ձևավորող է.

1 – 4 միավոր – Լավ յուրացված չէ։

4 – 7 միավոր – Յուրացված է մասամբ։

8 – 9 միավոր – Յուրացված է լավ։

10 միավոր – Գերազանց է յուրացված։

Ի ձայնավորի հնչյունափոխությունը

Ի ձայնավորը առավել զգայուն է շեշտի նկատմամբ, դյուրությամբ է շեշտազրկվում և հնչյունափոխվում։

Այս թեման բացատրելուց առաջ առաջարկում եմ դիտել համապատասխան տեսադասը[11]։ Այն դիտելուց հետո երեխաների հետ քննարկում ենք ի ձայնավորի հնչյունափոխության դեպքերը և սահմանում կանոնները։

[1]

Ներկայացնում եմ մի հնար, որը կիրառել եմ ի ձայնավորի հնչյունափոխությունը ուսուցանելիս և բավական արդյունավետ եմ համարում: Էությունը հետևյալն է: Երեխաներին բաժանում եմ խմբերի՝ ըստ ի ձայնավորի հնչյունափոխական դեպքերի:

I խումբ

իղձ – ըղձալի
ինչ – ընչաքաղց   ի→ ը (գրվող ը)
ինձ – ընձուղտ

II խումբ

գիր – գրավոր
ճիշտ – ճշտապահ   ի→ ը (չգրվող ը)
վիշտ – վշտահար

III խումբ

դեղին – դեղնակտուց
դարչին – դարչնագույն   ի→0
մահիճ – մահճակալ
բարի – բարություն

IV խումբ

Հոգի + ա + վիճակ = հոգեվիճակ
Գինի + ա + տուն = գինետուն   ի + ա→ե
Որդի + ա + սեր = որդեսեր

V խումբ

1. - armeduchannel

ալի + ակ = ալյակ
կղզի + ակ = կղզյակ   ի→ յ (ակ ածանցից առա)
որդի + ակ = որդյակ

Բոլոր խմբերը ուսումնասիրում են հանձնարարությունը, ներկայացնում ի ձայնավորի հնչյունափոխության դեպքերը և սահմանում կանոնները:

Դասն էլ դառնում է առավել աշակերտակենտրոն: Հետո մտագրոհ մեթոդին ենք դիմում՝ ներկայացնելով դասի ամփոփումը.



Թեմայի յուրացումը կարելի է ստուգել հետևյալ թեստի միջոցով.

1. Գտնել ավելորդ բառը.

սիրել, նստել, խոսել, ճշտել

2. Գրել 2 բառ, որոնցում գործում է ի – ը (չգրվող) հնչյունափոխական կանոնը։
3. Գրել 2 բառ, որոնցում գործում է ի – յ հնչյունափոխական կանոնը։
4. Գրել 2 բառ, որոնցում գործում է ի – ե հնչյունափոխական կանոնը։
5. Գրել 2 բառ, որոնցում գործում է ի – 0 հնչյունափոխական կանոնը։

Առավելագույն միավորը կսահմանվի 10 միավորը։

Յուրաքանչյուր ճիշտ քայլը կգնահատվի 1 միավոր։ Այս ինքնագնահատման հնարը արդար է և թափանցիկ։

Հատկորոշիչ՝

1 – 5 միավոր – բավարար։

6 – 9 միավոր – լավ։

10 միավոր – գերազանց։

ՈՒ ձայնավորի հնչյունափոխությունը

ՈՒ ձայնավորի հնչյունափոխությունը բացատրելիս կարևոր է հետևյալ 3 բառերի բացատրությանն անդրադառնալ.

ունչ

ումպ

ունդ

Երեխաներն արդեն գիտեն, թե ինչ է նշանակում ինչ, ավելացնել ունչ – ի բացատրությունը, քանի որ հնչյունափոխված ձևերը տարբերելը երեխաների համար դժվար է։

ինչ – ընչաքաղց, ընչազուրկ

ունչ – ընչացք

Սա շփոթելի հարցերից մեկն է և ունի պարբերաբար հիշեցման կարիք։

Անհրաժեշտ է դրանք գրի առնել բառատետրում։

Առաջարկվող առաջադրանքներ, որոնք կօգնեն երեխաներին սահմանել ու ձայնավորի հնչյունափոխական կանոնները։

Առաջադրանք 1

Ո՞ր բառում կա ու-ը հնչյունափոխություն

ա) սրտացավ

բ) սիրառատ

գ) ստախոս

դ) լսափող

ա) բթամիտ

բ) մսաջուր

գ) գարեհաց

դ) վիճաբանել

Առաջադրանք 2.

Ո՞ր բառում կա ու-0 հնչյունափոխություն։

ա) ամրոց

բ) դպրոց

գ) դարբնոց

դ) բրուտանոց

ա) մթնել

բ) սուտասան

գ) մածնապուր

դ) ճգնաժամ

Առաջադրանք 3.

Ո՞ր բառում կա ու – վ հնչյունափոխությունը.

ա)առավոտ

բ) առվակ

գ) առևտուր

դ) առագաստ

ա) կատվազգի

բ) կավագործ

գ) կավիճ

դ) կերակուր

Տնային աշխատանք նախընտրում եմ հանձնարարել հետևյալը. տրված արմատներով կազմել նոր բառեր այնպես, որ դրանք լինեն նոր կազմված բառի I բաղադրիչ. ճուտ, լուր, մութ, սուտ, բութ, թութ, նուռ, ջուր, մուր, լուռ։

Ը ձայնավորի հնչյունափոխությունը.

Իմ աշխատանքային փորձի ընթացքում բազմիցս համոզվել եմ, որ ը ձայնավորի հնչյունափոխությունը դժվար ընկալվող թեմաներից մեկն է։ Պատճառը անտարակույս, պարզ է։ Եթե մյուս ձայնավորների հնչյունափոխությունների դեպքում երևացող հնչյունների տառերի և նրանց փոփոխությունների հետ է աշխատանքը, ապա այստեղ առաջնակարգը լսելու և արտասանելոու գործոնն է։ Բացատրությունը իրականացնում եմ այսպես։ Պահանջում եմ գրել նշված բառերը այնպես՝, Ինչպես արտասանվում են։

քաղցը

կարծը

մանը

վագը

Հիշեցնում եմ գաղտնավանկի մասին և առաջարկում եմ այն ընդգծել նշված բառերում, հետո կազմել նոր բառեր և գրել անպես, ինչպես արտասանում են։

Ստացվում է՝

քաղցը – քաղցրություն

կարծը – կարծրատիպ

մանը՝ – մանրավաճառ

վագը՝ – վագրենի

Երեխաները կնկատեն տարբերությունը և կսահմանեն հնչյունափոխական կանոնը՝ ը – 0։

Վարժություններով ամփոփելուց հետո կյուրացվի թեման։ Անհրաժեշտ եմ համարում հետևյալ օրինակին ուշադրություն դարձնել

Սանը՝ – սանրել – սանը՝րվածք

Մաս III Երկհնչյունների հնչյունափոփոխությունը

Այս թեմային անդրադառնալու առաջ անհրաժեշտ է հիշեցնել երեխաներին, թե ինչ է երկհնչյունը: Երբ թվարկեցին երկհնչյունները, կառանձնացնեմ յա, յու, ույ երկհնչյունները: Երեխաների համար պարզ կդառնա, որ միայն դրանք են ենթարկվում հնչյունափոխության:

Յա երկհնչյունի հնչյունափոխությունը:

Յա երկհնչյունը դառնում է ե:

Օրինակներ՝

մատյան – մատենագրություն

ատյան – ատենակալ

քրիստոնյա – քրիստոնեություն

առօրյա – առօրեական

պատյան – պատենավոր

ՈՒՅ երկհնչյունի հնչյունափոխությունը

Շատ հաճախ այս հնչյունափոխական կանոնը երեխաների մոտ թյուր ըմբռնում է առաջացնում: Օրինակ՝

գույն – գունավոր

Աշակերտը կասի այն, ինչ I տպավորությամբ տեսնում է՝ յ-ն սղվել է: Այստեղ պետք է հիշեցնել, որ դիտարկում ենք <u>ույ</u> – ը որպես I հնչյունափոխվող միավոր: ԵՎ արդեն պարզ է դառնում, որ ույ – ու: Այնուհետև առաջադրանքները ուսումնասիրելուց հետո կանոնները սահմանվում են.

ա) թույն – թունավոր

գույն – գունավոր ույ - ու

զգույշ – զգուշորեն

բույս – բուսարան

բ) սառույց - սառցարան ույ - 0

կապույտ – կապտել

գ) բույն – բնավեր ույ - ը

պտույտ – պտտվել

Յու երկհնչյունի հնչյունափոխությունը

յու – ե

միություն – միութենական

եղջյուր – եղջերավոր

յու – ը

ձյուն – ձնծաղիկ

յու – 0

արյուն – արնագույն

ալյուր – ալրահամ

Առաջարկվող առաջադրանքներ

1. Ո՞ր շարքում կա երկհնչյունի հնչյունափոխություն ունեցող բառ (բառեր)։

ա) մթնալույս, գնդասեղ

բ) լրաբեր, ճշտախոս

գ) բուրմունք – հունարեն

դ) հույս, հույզ

2. Ո՞ր բառում է երկհնչյունը սղվել։

ա) շնագայլ

բ) հուսահատ

գ) կապտականաչ

դ) կուրանալ

3. Ո՞ր բառում չկա երկհնչյունի հնչյունափոխություն.

ա) լուսավոր

բ) ընկուզենի

գ) առույգություն

դ) աշխուժություն

Անհրաժեշտ է խոսել նաև ա և ո ձայնավորների հազվադեպ հնչյունափոխությունների մասին։

Բերել օրինակներ և եզրակացությունը թողնել երեխաներին։

Եզրակացություն

Սույն հետազոտական աշխատության մեջ փորձեցի հնչյունափոխական կանոնների ուսուցման սեփական փորձը ներկայացնել: Այսօր ցանկացած թեմայի ուսուցում արդյունավետ է ուսուցման ժամանակակից և ավանդական մեթոդների ճիշտ և օգտակար համադրմամբ: Մեթոդներն ընտրելիս շատ կարևոր է հաշվի առնել դասարանի առանձնահատկությունները, աշակերտների իմացական մակարդակը, ԿԱՊԿՈՒ աշակերտների կարիքները:

Կարծում ենք՝ մեր առաջարկած մեթոդներն ու հնարները կիրառելը արդյունավետ է և նպատակային, իսկ հնի և նորի համադրումը՝ խիստ արդիական և կարևոր:

Օգտագործված գրականություն

1. Դ.Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 5 – րդ դասարան, «Էդիտ Պրինտ» հրատարակչություն, Երևան, 2019թ, էջեր 242:

2. Ա. Սարգսյան, Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց, Երևան 2006թ էջ 30: